ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒՂԱՐԿԵԼ (*APOSTELLO*)
SPECIAL TOPIC: SEND (*APOSTELLO*)

Սա հասարակ հունարեն «ուղարկել» (այսինքն՝ *apostellō*) բառն է: Այս տեմինն ունի աստվածաբանական մի քանի կիրառություն՝

1. Դասական հունարենում, ինչպես նաև ռաբբիներն այն կիրառում էին այն մարդու համար, որը կանչված և ուղարկված է որպես մեկ ուրիշի պաշտոնական ներկայացուցիչը, մեր «դեսպան» բառի պես մի բան (տես՝ 2 Կորնթ.5:20):
2. Ավետարանները հաճախ այս ԲԱՅԸ օգտագործում են Հիսուսի համար, որպես Հորից ուղարկված: Հովհաննես Ավետարանում այս տերմինը մեսիական երանգ է ստանում (տես՝ Մատթ.10:40, 15:24, Մարկ.9:37, Ղուկ.9:48 և հատկապես Հովհ.5:36,38, 6:29,57, 7:29, 8:42, 10:36, 11:42, 17:3,8,18,21,23,25, 20:21 [թե՛ «առաքյալ» բառը և թե՛ դրա հոմանիշը՝ *pempō* կիրառվում են հ. 21-ում]): Այն կիրառվում է Հիսուսի կողմից հավատացյալներին ուղարկելու համար (տես՝ Հովհ. 17:18, 20:21):
3. ՆԿ-ը կիրառում է այս տերմինը աշակերտների համար՝
   ա. աշակերտների ներքին օղակի առաջին տասներկու առաքյալները (օր.՝ Մարկ.6:30, Ղուկ. 6:13, Գործք 1:2,26)
   բ. Առաքյալներին օգնող մարդկանց հատուկ խումբ կամ ծառայակիցներ՝
      (1) Բառնաբասը (տես՝ Գործք 14:4,14)
      (2) Անդրոնիկոսը և Հունիան (տես՝ Հռոմ.16:7)
      (3) Ապողոսը (տես՝ 1 Կորնթ.4:6-9)
      (4) Հակոբոսը՝ Հիսուսի կես եղբայրը (տես՝ Գաղ.1:19)
      (5) Սիվղանոսը և Տիմոթեոսը (տես՝ 1 Թեսաղ.2:6)
      (6) հավանական է Տիտոսը (տես՝ 2 Կորնթ.8:23)
      (7) հավանական է Եպափրոդիտոսը (տես՝ Փիլ.2:25)
   գ. եկեղեցում հարատևող՝ շարունակվող պարգև (տես՝ 1 Կորնթ.12:28-29, Եփես.4:11)
4. Պողոսն այս տերմինը կիրառում է իր նամակներից շատերում իր համար, որպես իրեն Աստծուց տրված Քրիստոսի ներկայացուցիչը լինելու իշխանության հաստատման կերպ (տես՝ Հռոմ.1:1, 1 Կորնթ.1:1, 2 Կորնթ.1:1, Գաղ.1:1, Եփես.1:1, Կող.1:1, 1 Տիմ.1:1, 2 Տիմ.1:1, Տիտոս 1:1):
5. Որպես ժամանակակից հավատացյալներ, խնդիրը որի հետ բախվում ենք այն է, որ ՆԿ-ը երբեք չի սահմանում, թե ինչ է իր մեջ բովանդակում այս շարունակական պարգևը կամ ինչպես կարող ենք դա ճանաչել հավատացյալների մեջ: Ըստ երևույթին կարելի է զանազանել սկզբնական Տասներուսի (#3) և հետագա կիրառությունների (#3բ) միջև: Տե՛ս <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԵՐՇՆՉԱՆՔ</u> և <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ</u>: Եթե ժամանակակից «առաքյալները» ներշնչված չեն գրելու ավելի շատ Սուրբ Գիրք (այսինքն՝ կանոնը փակված է, տես՝ Հուդա հ.3, տե՛ս՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿԱՆՈՆ</u>), ապա այն ինչ նրանք են անում տարբերվում է ՆԿ-յան մարգարեներից կամ ավետարանիչներից (տես՝ Եփես.4:11): Իմ ներկայացրած հավանականությունները հետևյալն են՝
   ա. չավետարանված վայրերում միսիոներական եկեղեցիներ սկսողները (ինչպես կիրառվում է *Դիդարքում*)
   բ. հովիվների ավագներ տվյալ տարածաշրջանում կամ հարանվանության մեջ
   գ. ոչ ոք չգիտի